Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/59580/02/22

Վ Ճ Ի Ռ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

23 դեկտեմբերի 2022թ. ք. Երևան

ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գրիգորի Վարդանյանը, քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի «ԱԿԱԷՄ» ՍՊ ընկերությունն (ՀՎՀՀ՝ 02862942, պետական գրանցման համար՝ 273.110.1236135, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Աբովյան փող. 23) ընդդեմ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲ ընկերության (հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Նուբարաշեն փող., 1/3 շենք), երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարություն (հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մելիք-Ադամյան 1)՝ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲ ընկերության կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված՝ «ԱԿԱԷՄ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին, թիվ 1965/22 գրությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին.

Պ Ա Ր Զ Ե Ց

I

1. **<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>**

«ԱԿԱԷՄ» ՍՊ ընկերությունը (այսուհետ նաև՝ Հայցվոր/Ընկերություն) 2022թ. նոյեմբերի 15-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ նաև՝ Դատարան) ընդդեմ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲ ընկերության (այսուհետ նաև՝ Պատասխանող), երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարություն (այսուհետ նաև՝ Երրորդ անձ/ Նախարարություն)՝ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲ ընկերության կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված՝ «ԱԿԱԷՄ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին, թիվ 1965/22 գրությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին:

Դատարանի 2022թ. նոյեմբերի 23-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ և գործով եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր է նշանակվել 2022թ. դեկտեմբերի 23-ը:

Դատարանի 2022թ. նոյեմբերի 23-ի մեկ այլ որոշմամբ Հայցվորի միջնորդությունը՝ հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ, մերժվել է:

2. <u>Հայցվորի դիրքորոշումը</u>

Դիմելով Դատարան՝ Հայցվորի ներկայացուցիչը հայտնել է, որ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲ ընկերության 2022թ. կարիքների համար կազմակերպվել է դեղերի և բժշկական նշանակության ապրանքների մատակարարման «ՀԱՊԱԿ-ԳՀԱՊՁԲ- 22/39» ծածկագրով գնման ընթացակարգ:

«ԱԿԱԷՄ» ՍՊ ընկերության կողմից ներկայացվել է գնային առաջարկ՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով:

23.08.2022թ. «ԱԿԱԷՄ» ՍՊ ընկերությունը ծանուցվել է հայտում առկա անհամապատասխանությունների մասին և առաջարկվել է մինչև սույն թվականի օգոստոսի 24-ը ներառյալ շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

«ԱԿԱԷՄ» ՍՊ ընկերության կողմից շտկումն իրականացվել է ժամկետի խախտմամբ:

«Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲ ընկերության 30.08.2022թ. 1965/22 ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված գրության համաձայն՝ «ԱԿԱԷՄ» ՍՊ ընկերությունը ծանուցվել է առկա անհամապատասխանությունների մասին, սակայն՝ շտկումն իրականացրել է ժամկետի խախտմամբ, ուստի՝ հիմք ընդունելով «ՀԱՊԱԿ-ԳՀԱՊՁԲ-22/39» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.10-րդ կետը, վերջինիս հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է:

«ԱԿԱԷՄ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշում չի կայացվել:

Հայտնել է, որ լիազորված մարմին ՀՀ ֆինանսների նախարարությունն Ընկերությանը ներառել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ հիմք ընդունելով «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲ ընկերության 30.08.2022թ. թիվ 1965/22 գրությունը:

Մինչդեռ՝ Ցուցակում ընդգրկվելու համար անհրաժեշտ էր նախ Պատվիրատուի պատճառաբանված որոշումը, ինչպես նաև ապացուցված համարել Ընկերության մեղավորությունը և վերջինիս կողմից անհիմն գործողություններ կամ անգործություն կատարելու փաստը, որը տվյալ դեպքում բացակայում է:

Նշել է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվելու համար անհրաժեշտ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի դրույթները չեն համադրվել Հայցվոր ընկերության կողմից կատարած/չկատարած գործողությունների հետ, ինչի արդյունքում միայն հնարավոր կլիներ ապացուցված համարել, որ Ընկերությունը թույլ է տվել վերոնշյալ դրույթների խախտում, այնուհետև՝ վերջինիս ներառել Ցուցակում:

Հայտնել է, որ Ընկերության կողմից չեն ներկայացվել Պատվիրատուի կողմից առաջարկված շտկումները, որը չի կարող գնահատվել որպես ստանձնած պարտավորության խախտում: Ընկերությունը գնման ընթացակարգի շրջանակներում չի ստանձնել շտկում իրականացնելու պարտավորություն:

Հավելել է, որ Պատվիրատուն առաջարկել է շտկում կատարել, այլ ոչ թե պարտադրել, դա կամընտրանք է, այլ ոչ թե պարտավորություն կամ պարտականություն: Նշել է, որ եթե շտկում կատարելը լիներ պարտավորություն, ապա՝ Պատվիրատուն ոչ թե կառաջարկեր, այլ կպահանջեր, կպարտավորեցներ:

Հանգել է հետևության, որ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲ ընկերության կողմից 30.08.2022թ. կայացված «ԱԿԱԷՄ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ֆինանսների նախարարությանն ուղղված թիվ 1965/22 համարի գրությունը ոչ իրավաչափ է:

Փաստել է, որ այդ որոշումը նշված դրույթին համապատասխան պետք է նաև ուղարկվեր մասնակցին, որը չի կատարվել:

Որպես հայցի իրավական հիմք Հայցվորի ներկայացուցիչը վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը, 2-րդ մասը:

Վերոգրյալների հիման վրա խնդրել է ոչ իրավաչափ ճանաչել «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲ ընկերության կողմից 30.08.2022թ. կայացված «ԱԿԱԷՄ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված թիվ 1965/22 համարի գրությունը:

3. <u>Պատասխանողի դիրքորոշումը</u>

Պատասխանողը չի ներկայացրել հայցադիմումի պատասխան, ինչպես նաև գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող ապացույցները:

4. <u>Երրորդ անձի դիրքորոշումը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը որևէ դիրքորոշում չի ներկայացրել:

II

1. <u>Գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը</u>

- «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲ ընկերության (Պատվիրատու) 2022թ. կարիքների համար կազմակերպվել է դեղերի և բժշկական նշանակության ապրանքների մատակարարման «ՀԱՊԱԿ-ԳՀԱՊՁԲ-22/39» ծածկագրով գնման ընթացակարգը:

- «ԱԿԱԷՄ» ՍՊ ընկերությունը 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ներկայացրել է հայտ:

- «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲ ընկերության կողմից 2022թ. օգոստոսի 30-ին կազմվել (կայացվել) է թիվ 1965/22 գրությունը:

- «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲ ընկերության կողմից 2022թ. օգոստոսի 30-ին կազմված (կայացված) թիվ 1965/22 գրության հիմքում ընկած հանգամանքները («ԱԿԱԷՄ» ՍՊ ընկերության ներկայացրած հայտում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ հրավերի պահանջներին և առաջարկվել է մինչև 2022թ. օգոստոսի 24-ը ներառյալ շտկել դրանք, իսկ «ԱԿԱԷՄ» ՍՊ ընկերության կողմից շտկումը կատարվել է ժամկետի խախտմամբ) առկա են եղել **(անվիճելի փաստ):**

2. Դատարանի իրավական վերլուծությունը, պատճառաբանություններն և եզրահանգումը

Ուսումնասիրելով գործի հանգամանքները և ներկայացված ապացույցները, յուրաքանչյուր ապացույց գնահատելով գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ, Դատարանը եզրահանգում է, որ հայցը ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 201 հոդվածի համաձայն՝ դատարանները հատուկ հայցային վարույթներն իրականացնում են սույն օրենսգրքով նախատեսված գործի քննության ընդհանուր կանոնների համաձայն, այն հատուկ կանոնների պահպանմամբ, որոնք սահմանված են սույն ենթաբաժնի դրույթներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 202 հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ դատարանը հատուկ հայցային վարույթի կարգով քննում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված գնումների հետ կապված վեճերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5 հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության համաձայն՝ դատարանը սույն գլխով սահմանված կարգով քննում և լուծում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 46 հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության համաձայն՝ յուրաքանչյուր շահագրգիռ անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

Նորմերի բովանդակությունից հետևում է, որ օրենսդիրը՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների հետ համաձայն չլինելու դեպքում յուրաքանչյուր շահագրգիռ անձի համար սահմանել է դրանց բողոքարկման պահանջով դատարան դիմելու (հատուկ հայցային վարույթի կարգով քննվող գնումների հետ կապված վեճը դատարանի միջոցով լուծելու) և իր հնարավոր խախտված իրավունքները վերականգնելու իրավունք:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել: Մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պարտավոր է ապացուցել իր պահանջների և առարկությունների հիմքում դրված ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով կամ այլ օրենքներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա՝ ղեկավարվելով վիճելի իրավահարաբերության նկատմամբ կիրառելի իրավական նորմերով:

Վերոգրյալից ելնելով Դատարանն արձանագրում է, որ գործի լուծման համար նշանակություն ունեն «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲ ընկերության (Պատվիրատու) 2022թ. կարիքների համար դեղերի և բժշկական նշանակության ապրանքների մատակարարման «ՀԱՊԱԿ-ԳՀԱՊՁԲ-22/39» ծածկագրով [illegible] (ապրանքային) [illegible]: Պատվիրատուի [illegible] և բժշկական նշանակության ապրանքների մատակարարման «ՀԱՊԱԿ-ԳՀԱՊՁԲ-22/39» ծածկագրով

ազգային կենտրոն» ՓԲ ընկերության կողմից 2022թ. օգոստոսի 30-ին կազմված (կայացված) թիվ 1965/22 գրության հիմքում ընկած հանգամանքները («ԱԿԱԷՄ» ՍՊ ընկերության ներկայացրած հայտում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ հրավերի պահանջներին և առաջարկվել է մինչև 2022թ. օգոստոսի 24-ը ներառյալ շտկել դրանք, իսկ «ԱԿԱԷՄ» ՍՊ ընկերության կողմից շտկումը կատարվել է ժամկետի խախտմամբ) առկա լինելու փաստերը, որոնցից «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲ ընկերության (Պատվիրատու) 2022թ. կարիքների համար դեղերի և բժշկական նշանակության ապրանքների մատակարարման «ՀԱՊԱԿ-ԳՀԱՊՁԲ-22/39» ծածկագրով գնման ընթացակարգը կազմակերպված լինելու, «ԱԿԱԷՄ» ՍՊ ընկերությունը 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով հայտ ներկայացրած լինելու և «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲ ընկերության կողմից 2022թ. օգոստոսի 30-ին թիվ 1965/22 գրությունը կազմված (կայացված) լինելու փաստերի ապացուցման պարտականությունը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62 հոդվածի 1-ին մասի հիմքով, կրում է Հայցվորը, իսկ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲ ընկերության կողմից 2022թ. օգոստոսի 30-ին կազմված (կայացված) թիվ 1965/22 գրության հիմքում ընկած հանգամանքները («ԱԿԱԷՄ» ՍՊ ընկերության ներկայացրած հայտում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ հրավերի պահանջներին և առաջարկվել է մինչև 2022թ. օգոստոսի 24-ը ներառյալ շտկել դրանք, իսկ «ԱԿԱԷՄ» ՍՊ ընկերության կողմից շտկումը կատարվել է ժամկետի խախտմամբ) առկա լինելու փաստի ապացուցման պարտականությունը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.10 հոդվածի 1-ին մասի հիմքով, կրում է Պատասխանողը:

Քննարկվող պարագայում հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 61 հոդվածի 5-րդ մասի իրավակարգավորումները և այն, որ Հայցվորը ներկայացված հայցադիմումով ընդունել է այդ հանգամանքները, Պատասխանողի կողմից ապացուցման ենթակա փաստը Դատարանը գնահատում է որպես անվիճելի փաստ, հետևաբար՝ ապացուցված է համարում այդ՝ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲ ընկերության կողմից 2022թ. օգոստոսի 30-ին կազմված (կայացված) թիվ 1965/22 գրության հիմքում ընկած հանգամանքները («ԱԿԱԷՄ» ՍՊ ընկերության ներկայացրած հայտում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ հրավերի պահանջներին և առաջարկվել է մինչև 2022թ. օգոստոսի 24-ը ներառյալ շտկել դրանք, իսկ «ԱԿԱԷՄ» ՍՊ ընկերության կողմից շտկումը կատարվել է ժամկետի խախտմամբ) առկա լինելու, փաստը:

Նման պայմաններում ապացուցման առարկան կազմող մյուս փաստերին, ի հիմնավորումն դրանց ներկայացված ապացույցներին և արդյունքում այդ փաստերը ապացուցված լինելու կամ չլինելու հարցին Դատարանը դրանց չի անդրադառնում, քանի որ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲ ընկերության կողմից 2022թ. օգոստոսի 30-ին կազմված (կայացված) թիվ 1965/22 գրության հիմքում ընկած հանգամանքները («ԱԿԱԷՄ» ՍՊ ընկերության ներկայացրած հայտում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ հրավերի պահանջներին և առաջարկվել է մինչև 2022թ. օգոստոսի 24-ը ներառյալ շտկել դրանք, իսկ «ԱԿԱԷՄ» ՍՊ ընկերության կողմից շտկումը կատարվել է ժամկետի խախտմամբ) առկա

լինելու փաստը ապացուցված լինելու պարագայում մյուս փաստերի ապացուցված կամ վիճելի լինելու հանգամանքը գործի լուծման համար այլևս չունեն նշանակություն:

Ինչ վերաբերում է Հայցվորի ներկայացուցչի այն փաստարկին, որ պատվիրատուի ղեկավարի կողմից պատճառաբանված որոշում չի կայացվել, ապա՝ Դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումներին՝ արդյո՞ք «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲ ընկերության 2022թ. օգոստոսի 30-ի թիվ 1965/22 գրությունը կարող է գնահատվել որպես գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի որոշում, և արդյո՞ք այն պատճառաբանված է:

Ներկայացված «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲ ընկերության տնօրեն Սերգեյ Խաչատրյանի կողմից 2022թ. օգոստոսի 30-ին Ֆինանսների նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող պարոն Արման Ադիլխանյանին ուղղված թիվ 1965/22 գրության պատճենի, որի համաձայն՝ *հայտնվել է, որ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲ ընկերության 2022թ. կարիքների համար կազմակերպվել է դեղերի և բժշկական նշանակության ապրանքների մատակարարման «ՀԱՊԱԿ-ԳՀԱՊՁԲ-22/39» ծածկագրով գնման ընթացակարգը, որի արդյունքում «ԱԿԱԷՄ» ՍՊ ընկերության կողմից ներկայացվել է գնային առաջարկ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով: Նույն թվականի օգոստոսի 23-ին «ԱԿԱԷՄ» ՍՊ ընկերությանը ծանուցվել է հայտում առկա անհամապատասխանությունների մասին և առաջարկվել է մինչև նույն թվականի օգոստոսի 24-ը ներառյալ շտկել արձանագրված անհամապատասխանությունները, սակայն՝ նշված ընկերության կողմից շտկումն իրականացվել է ժամկետի խախտմամբ, ուստի՝ հիմք ընդունելով «ՀԱՊԱԿ-ԳՀԱՊՁԲ-22/39» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.10-րդ կետը, վերջինիս հայտը, գնահատվել է անբավարար և մերժվել է: Հաշվի առնելով վերոգրյալը և առաջնորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6 հոդվածի 6-րդ մասի ա. կետով՝ խնդրել է միջնորդությունը գնումների մասին օրենսդրությամբ սահմանված միջոցառումները իրականացնելու հարցում,* ուսումնասիրությամբ՝ Դատարանն արձանագրում է, որ այն կազմված է պատվիրատուի ղեկավարի կողմից, տեղեկություններ է պարունակում մասնակցի՝ հայցվոր «ԱԿԱԷՄ» ՍՊ ընկերության, կողմից պարտավորության խախտում թույլ տրված լինելու վերաբերյալ, ինչպես նաև առկա է հիմնավորում (որով հանգել է հետևության) և եզրահանգում, որպիսի պարագայում անկախ այն հանգամանքից, որ կազմված չէ որոշման ձևով այն գնահատում է որպես գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշում, իսկ Հայցվորի ներկայացուցչի վերոնշյալ փաստարկն անհիմն:

Ինչ վերաբերում է Հայցվորի ներկայացուցչի այն փաստարկներին, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը «Հոգեկան առողջության ազգային կենտրոն» ՓԲ ընկերության թիվ 1965/22 գրության հիման վրա ներառել է «ԱԿԱԷՄ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, մինչդեռ՝ ցուցակում ընդգրկվելու համար անհրաժեշտ էր նախ Պատվիրատուի պատճառաբանված որոշումը, այնուհետև՝ ապացուցված համարել Ընկերության մեղավորությունը և վերջինիս կողմից անհիմն գործողություններ կամ անգործություն կատարելու փաստը, որը տվյալ դեպքում բացակայել է, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի

դրույթները չեն համադրվել Հայցվոր ընկերության կողմից կատարած/չկատարած գործողությունների հետ, ինչպես նաև պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշումը պետք է ուղարկվեր մասնակցին, ինչը չի կատարվել, ապա՝ Դատարանը հարկ է համարում արձանագրել, որ դրանք վերաբերում են պատվիրատուի ղեկավարի կողմից մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ պատճառաբանված որոշման կայացմանը հաջորդող գործողություններին, ուստի՝ որևէ կերպ չեն առնչվում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ պատճառաբանված որոշման իրավաչափության հարցին, դուրս են ներկայացված պահանջի (գրությունը/որոշումը ոչ իրավաչափ ճանաչելու) քննության շրջանակից և գործի լուծման համար նշանակություն չունեն:

Ինչ վերաբերում է Հայցվորի ներկայացուցչի այն փաստարկին, որ Պատվիրատուի կողմից առաջարկված շտկումները չեն կարող գնահատվել որպես ստանձնած պարտավորության խախտում և հայցվոր ընկերությունը գնման ընթացակարգի շրջանակներում չի ստանձնել շտկում իրականացնելու պարտավորություն, ապա՝ Դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 18 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնում կատարելու ընթացակարգերն են՝ էլեկտրոնային աճուրդը, մրցույթը, գնանշման հարցումը, մեկ անձից գնումը:

Օրենքի 26 հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերի համաձայն՝ պատվիրատուի ղեկավարի հրամանով ձևավորվում է գնահատող հանձնաժողով, որը՝ բացում և գնահատում է հայտերը, որոշում է գնման ընթացակարգի հաղթողին (հաղթողներին):

Օրենքի 2 հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ **հայտը** հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է:

Օրենքի 30 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝ հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը, գնային առաջարկը, ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Իրավահարաբերությունների ծագման պահին գործող «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության՝ 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշման (այսուհետ նաև՝ Կառավարության որոշում) 32 կետի 1-ին ենթակետի բ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հավաստում՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր համապատասխանության մասին:

Կառավարության որոշման 32 կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագրի ապահովումը կամ համաձայնագիրը կնքելու

նպատակով պայմանագիրը կնքած անձը չի փոխարինում տուժանքի ձևով ներկայացված որակավորման կամ պայմանագրի ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կառավարության որոշման 41-րդ և 42-րդ կետերի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ (...), ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է (...):

Նորմերի բովանդակությունից հետևում է, որ գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու համար մասնակիցներն օրենքով սահմանված կարգով առաջարկներ (հայտեր) են ներկայացնում, որոնք ենթակա են գնահատման գնահատող հանձնաժողովի կողմից: Ընդ որում, հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու պարագայում հանձնաժողովի քարտուղարի համար սահմանված է նույն օրն՝ էլեկտրոնային փոստի միջոցով, մասնակցին իր կողմից ներկայացված հայտում արձանագրված անհամապատասխանության մասին հայտնելու և այն մինչև հայտերի բացման և գնահատման նիստի կասեցման ժամկետի ավարտը շտկել առաջարկելու պարտավորություն՝ մասնակցին տալով հայտում արձանագրված անհամապատասխանությունը մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկելու հնարավորություն, ինչի չկատարելը հիմք է հայտն անբավարար գնահատելու և մերժելու համար, ավելին՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Արդյունքում՝ Դատարանը եզրահանգում է, որ վերոնշյալ փաստարկը ևս անհիմն է:

Ամփոփելով՝ Դատարանը եզրահանգում է, որ ներկայացված հայցն անհիմն է և ենթակա է մերժման:

<u>Դատական ծախսերի բաշխման հարցը</u>

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101 հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ հայցը ենթակա է մերժման, իսկ Հայցվորի կողմից նախապես 50,000.00 ՀՀ դրամի չափով վճարվել է պետական տուրքի գումարը, Դատարանը եզրահանգում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191, 192 և 234.12 հոդվածներով, Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

«ԱԿԱԷՄ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲ ընկերության, երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարություն՝ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲ ընկերության կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված՝ «ԱԿԱԷՄ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին, թիվ 1965/22 գրությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին, մերժել:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակելու օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

<u>Ծանոթություն</u>: վճիռը մտել է օրինական ուժի մեջ
« » _____ 202 թ.:

ԴԱՏԱՎՈՐ՝ Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ